



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ**

0010 Երևան, Վ. Սարգսյան 3/8, Հեռ.՝ 010 594 062
Էլ. հասցե՝ shushan.doydoyan@moj.am

21.03.2016թ.

ՈՐՈՇՈՒՄ

**ՀՀ ԱՆ Անձնական տվյալների պաշտպանության գործակալության
որոշումների (վարչական գործերի) հերթական համարները սահմանելու
մասին**

ՀՀ ԱՆ Անձնական տվյալների պաշտպանության գործակալության որոշումները համարակալվում են հետևյալ ձեռով եւ հետևյալ պայմանանշանների զուգորդությամբ.

- Վարչական գործերով որոշումներ («Վարչական վարույթի վերաբերյալ գործերի, դրանց հաշվառման գրանցամատյանների եւ վարչական ակտերի հաշվառման գրանցամատյանների վարման կարգն ու պայմանները սահմանող օրինակելի կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության՝ 25 հունիսի 2004 թվականի N 975-Ն որոշման Հավելվածի համաձայն) – **Վարչական վարույթ. գործ N-001¹/01²/16³**
- Խորհրդատվական որոշումներ – **Խորհրդատվական որոշում. ԱՏՊԽ⁴-001⁵/16⁶**
- Խորհրդատվական դիրքորոշումներ – **Դիրքորոշում. ԱՏՊԴ⁷-001⁸/16⁹**

¹ Որոշման հերթական համարը

² Ամիսը, երբ հարուցվել է որոշման հիմքում ընկած վարչական վարույթը

³ Տարվա վերջին երկու թվերը, երբ հարուցվել է որոշման հիմքում ընկած վարչական վարույթը

⁴ ԱՏՊԽ – Անձնական տվյալների պաշտպանության (գործակալություն). Խորհրդատվական

⁵ Որոշման հերթական համարը

⁶ Տարվա վերջին երկու թվերը, երբ կայացվել է որոշումը

⁷ ԱՏՊԴ – Անձնական տվյալների պաշտպանության (գործակալություն). դիրքորոշում


- Թույլտվություն անձնական տվյալներն այլ երկիր փոխանցելու վերաբերյալ – **Թույլտվություն. ԱՏՊԹ¹⁰-001¹¹/16¹²**
- Անձնական տվյալների պաշտպանության բավարար մակարդակն ապահովող պետությունների ցանկը հաստատելու վերաբերյալ որոշում – **ԱՏՊՊ¹³-001¹⁴/16¹⁵**

Վարչական գործերով որոշումների, խորհրդատվական որոշումներ, խորհրդատվակա դիրքորոշումների հերթական հարամարակալումը յուրաքանչյուր տարի սկսվում է 001-ից:

ՀՀ ԱՆ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏ

ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆ



⁸ Դիրքորոշման հերթական համարը

⁹ Տարվա վերջին երկու թվերը, երբ կայացվել է դիրքորոշումը

¹⁰ ԱՏՊԹ – Անձնական տվյալների պաշտպանության (գործակալություն). թույլտվություն

¹¹ Թույլտվության հերթական համարը

¹² Տարվա վերջին երկու թվերը, երբ կայացվել է որոշումը

¹³ ԱՏՊՊ – Անձնական տվյալների պաշտպանության (գործակալություն). պետություններ

¹⁴ Որոշման հերթական համարը

¹⁵ Տարվա վերջին երկու թվերը, երբ կայացվել է որոշումը